ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ օրենսդրությամբ ՀՀ Շիրակի մարզպետին վերապահված պաշտպանության բնագավառի լիազորությունների իրականացման համար, 2025 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից կատարվել են անհրաժեշտ աշխատանքներ, որոնց արդյունքում գործընթացներն իրականացվել և ապահովվել են ամբողջությամբ՝ սահմանված ժամկետներում.

- ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին, զորահավաքային նախապատրաստության բնագավառում պլանային գործառույթներ իրականացնելիս, Բաժնի կողմից ցուցաբերվել են անհրաժեշտ մեթոդական աջակցություն,
- Իրականացվել են զորահավաքային նախապատրաստության մասով՝ պետական պաշտպանական պատվերի (առաջադրանքի) կատարումն ապահովող միջոցառումների նախապատրաստման աշխատանքներ,
- Իրականացվել են մարզի զորահավաքային նախապատրաստության ծրագրերի և զորահավաքային պլանների մշակման աշխատանքները, ապահովվել է Բաժնի մասնակցությունը զորահավաքային պլանների կատարման աշխատանքներին,
- Ապահովվել է հանրապետության զորահավաքային աշխատանքները համակարգող լիազոր մարմնի, պետական կառավարման այլ մարմինների, ինչպես նաև այլ մարզերի զորահավաքային մարմինների հետ համագործակցությունը,
- Բաժինը մասնակցել է 2025 թվականի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով Հայաստանի Հանրապետությունում անցկացված վարժական հավաքների շրջանակներում հայտարարված զորակոչերին առնչվող աշխատանքներին և իր լիազորությունների սահմաններում ցուցաբերել է անհրաժեշտ աջակցություն: **Մարզում վարժական հավաքների կատարման համար նախատեսված ցուցանիշը կատարվել է 100%**: Բաժինը համագործակցել է ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիսարիատի Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատի, մարզի համայնքների ղեկավարների, ծանուցման տեղամասերի անձնակազմերի հետ: Ապահովվել է Բաժնի մասնակցությունը՝ ՀՀ ՊՆ ՀԶԿ Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատի և Շիրակի մարզում տեղակայված ՀՀ ՊՆ զորապասերի ուսումնավարժական հավաքներին ու քննարկումներին,
- Ապահովվել է նաև Բաժնի մասնակցությունը՝ զինված ուժերում պայմանագրային զինծառայողներով համալրման քարոզչական աշխատանքներին,
- Զոհված և անհայտ բացակա համարվող զինծառայողների հարազատներին ցուցաբերվել են խորհրդատվական աջակցություն,
- Ստացված, պաշտպանության բնագավառին առնչվող, իրավական ակտերի նախագծերն ուսումնասիրվել, քննակրվել և ներկայացվել են անհրաժեշտ առաջարկություններ,
- Իրականացվել են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված զորահավաքային նախապատրաստության հետ կապված այլ

հրապարակման ոչ ենթակա գործառույթներ, որոնց գործընթացների վերաբերյալ անձամբ զեկուցվել են ՀՀ Շիրակի մարզպետին,

- Սահմանված ժամկետներում ապահովվել է ՀՀ կառավարության՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչեր հայտարարելու և զորացրում կատարելու մասին որոշումներով ստեղծված ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ բոլոր աշխատանքները. զորակոչիկների անձնական գործերի ուսումնասիրություններ, նիստերի գումարում, պարտադիր զինվորական ծառայության զորակոչերից տարկետման ու ազատման ենթակա քաղաքացիների վերաբերյա եզրակացությունների ու առաջարկությունների նախագծերի պատրաստում և այլն: 2025 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի շրջանակներում, ուսումնասիրվել են զորակոչերից տարկետման ու ազատման ենթակա թվով 268 զորակոչիկի անձնական գործեր,

2024 թվականի ձմեռային զորակոչի արդյունքները, որն ավարտվել է 2025 թվականի հունվար ամսին, կազմել է 110.3 %, 2025 թվականի ամառային զորակոչի արդյունքները՝ 102.7%,

- Բաժնում իրականացվել են նաև ՀՀ Շիրակի մարզպետին հասցեագրված, ինչպես նաև ՀՀ վարչապետին և պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված ու ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ վերահասցեագրված հանձնարարականների, գրությունների, դիմումների և այլ փաստաթղթերի քննարկումներ, ուսումնասիրություններ ու պատասխան գրությունների նախապատրաստման, ինչպես նաև՝ ՀՀ Շիրակի մարզպետի ու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի հանձնարարականների կատարման աշխատանքներ,
- Իրականացվել են նաև հրապարակման ոչ ենթակա աշխատանքներ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

12 փետրվարի 2026թ.